



ՁԵԿՈՒՅՑ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՎ ՊԱՀԵՍՏԱԶՈՐՈՒՄ
ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱԶՈՐ

2024

Հեղինակային խումբ՝

Նազելի Մովսեսյան

Անուշ Պետրոսյան

Խմբագիր՝

Արթուր Սաքունց

Մույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի և Ժողովրդավարության ազգային աջակցության հիմնադրամի օժանդակության շնորհիվ: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի և Ժողովրդավարության ազգային աջակցության հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ԶՈՐԱԿՈՉԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԻ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ	5
2023 Թ. ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	27
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.....	35
2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ և ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԻՄԱԾ ԱՆՁԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	40
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	41
Հավելված 1	44
1998 Թ-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ը ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԱԶԱՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	44

ՆԱԽԱԲԱՆ

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) 2008 թվականից իրականացնում է գորակոչի գործընթացի մշտադիտարկում: Կազմակերպությունն իրականացնում է նաև զինվորական հաշվառման ենթակա և պահեստագործում հաշվառված անձանց, գորակոչիկների իրավունքների և պարտականությունների շարունակական իրազեկում և իրավական խորհրդատվության տրամադրում:

Կազմակերպության միջոցով քաղաքացիներն իրազեկվում են գորակոչի գործընթացի տարբեր փուլերում իրավական ընթացակարգերի վերաբերյալ, մասնավորապես՝ պարտադիր ժամկետային ծառայության, վարժական հավաքների կամ գորահավաքային գորակոչի ենթակա քաղաքացիների ծանուցման, նրանց առողջական վիճակի հետազոտման, առողջական վիճակի վերաբերյալ բժշկական եզրակացությունների, պիտանիության վերաբերյալ որոշումների, բժշկական և այլ փաստաթղթերի տրամադրման մասին:

Կազմակերպությունն իրականացնում է նաև օրենսդրական վերլուծություններ և պետական մարմիններին պարբերաբար ներկայացնում օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ փոփոխությունների առաջարկություններ՝ մարդու իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով:

Մույն զեկույցում ներկայացվում է 2023 թվականի ամառային և ձմեռային գորակոչերի ընթացքում ՀՔՍ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրության արդյունքում արձանագրված գորակոչիկների, զինվորական հաշվառման ենթակա և պահեստագործում հաշվառված անձանց իրավունքների պաշտպանության վիճակը:

2023 թվականի ապրիլի 13-ին ՀՀ Կառավարության որոշմամբ ապրիլի 17-ից մինչև հուլիսի 31-ը հայտարարվեց շաբաթյին կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ամառային գորակոչ¹: Նույն թվականի հոկտեմբերի 26-ին ՀՀ Կառավարության որոշմամբ հոկտեմբերի 27-ից մինչև 2024 թվականի հունվարի 31-ը հայտարարվեց 2023 թվականի ձմեռային գորակոչ²:

¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=176450>

² <https://www.arlis.am/documentView.aspx?docID=184412>

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում սկսեցին անցկացվել պարբերական վարժական հավաքներ, Զեկույցում անդրադարձ է կատարված նաև դիտարկվող ժամանակահատվածում (2023 թ ապրիլի 17-ից մինչև 2024 թ հունվարի 31-ը) Կազմակերպություն դիմած պահեստագործում հաշվառված անձանց կողմից բարձրաձայնված խնդիրներին:

Զեկույցում արձանագրված են նաև հաշվետու ժամանակահատվածում Կազմակերպությանը դիմած զինվորական հաշվառման ենթակա և օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների բարձրաձայնած խնդիրները 2023 թ ապրիլի 17-ից մինչև 2024 թ հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում:

**ԶՈՐԱԿՈՉԻ ԳՈՐԾՆԹԱՅՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ,
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԻ ԵՎ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Զորակոչի գործընթացը, զորակոչիկների բժշկական զննության անցկացումը, տարբեր հիմնավորումներով տարկետումից օգտվելու իրավունքը, պահեստագործային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների անցկացումը կարգավորող և հարակից հիմնական իրավական ակտերն են.

- *«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը³,*
- *«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը⁴,*
- *«Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 18-ի N 404-Ն որոշումը⁵,*
- *«Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը,*

³ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=191082>

⁴ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=191089>

⁵ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=191981>

փորձաքննության եզրակացությունների ձեռքբերում, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 18-ի N 405-Ն որոշումը⁶,

- «Մպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու կարգը 7 պայմանները սահմանելու մասին» » ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 18-ի N 450-Ն որոշումը⁷,

- «Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-Ն և 2015 թվականի փետրվարի 5-ի N 117-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունվարի 13-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 18-ի N 451-Ն որոշումը⁸,

- «Մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 18-ի N 457-Ն որոշումը⁹

- «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 18-ի N 1174-Ն որոշումը¹⁰:

- 2023 թ. ապրիլի 13-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-126-Ն¹¹) օրենքը:

⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=182492>

⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=167838>

⁸ <https://arlis.am/DocumentView.aspx?docid=189049>

⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135030>

¹⁰ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126122>

✓ Օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասությունից հետո լրացվեց նոր նախադասություն. «Սույն մասով սահմանված՝ գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումների համար, ինչպես նաև սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված տարկետումները չեն կարող տրվել սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն նպատակային ուսումնառության համար տարկետում ստացած քաղաքացիներին:» Այսինքն գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումների համար, ինչպես նաև բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորողին նախատեսված տարկետումները չեն կարող տրվել ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին ՀՀ ՊՆ հետ քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած քաղաքացիներին: Նշված փոփոխությունն ըստ էության

✓ Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված քաղաքացուն տարկետում տրամադրելու վերաբերյալ դրույթը մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող (ֆունկցիոնալության գնահատման ինքնասպասարկման բաղադրիչի ծանր կամ խորը սահմանափակումների դեպքում) կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր ունենալու դեպքում, լրացվել է ձևակերպմամբ «մինչև 18 տարեկան քույր կամ եղբայր ունենալու դեպքում՝ մինչև քրոջ կամ եղբոր 18 տարին լրանալու օրը», այդպիսով հստակեցնելով հաշմանդամություն ունեցող կամ անգործունակ ճանաչված քրոջ կամ եղբոր տարիքը, որի լրանալու դեպքում գորակոչիկը կրոցնում է տարկետման իրավունքը:

✓ Օրենքի 25-րդ հոդվածի 11-րդ մասը լրացվեց նոր նախադասությամբ. «Զորակոչի ենթակա քաղաքացու առողջական վիճակի անհրաժեշտ հետազոտությունները

¹¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=176876>

հայտարարված գորակոչի ընթացքում ավարտված չլինելու դեպքում փորձաքննական եզրակացություն չի կայացվում, համապատասխան հետազոտությունները շարունակվում են հայտարարված գորակոչից հետո, և քաղաքացու առողջական վիճակի փորձաքննությունն իրականացվում է հաջորդ գորակոչի ժամանակ»:

Մինչ նշված կարգավորման ուժի մեջ մտնելը որոշ դեպքերում գորակոչիկների հետազոտությունները շարունակվում էին հայտարարված գորակոչից հետո և փորձաքննությունն իրականացվում էր հաջորդ գորակոչի ժամանակ առանց տարկետման վերաբերյալ ԿԲՀ եզրակացության:

Կատարված փոփոխությամբ, փաստորեն, օրենսդրական մակարդակում ամրագրվում է գորակոչիկներին՝ ընթացիկ գորակոչի շրջանակներում փորձաքննել չհասցնելու հետևանքով նրանց հաջորդ գորակոչին ներկայացնելու դրույթը:

Նշված փոփոխությունը դրական է այն իմաստով, որ առանց գորակոչիկի իրական առողջական վիճակը պարզելու վերջինիս չի պարտադրվում գորակոչվել զինվորական ծառայության, այսինքն կբացառվի այն այն բացասական երևույթը, երբ գորակոչիկներն առողջական վիճակի հետազոտությունների և փորձաքննության չէին ենթարկվում տարբեր սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով, այդ թվում նաև ժամանակի սղության և գորակոչի գործընթացքում տեղ գտած կազմակերպական աշխատանքների թերությունների պատճառով:

✓ Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվեց փոփոխություն «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող շարքային կազմի պարտադիր զինծառայողն իր ցանկությամբ ծառայության է նշանակվում եղբոր ծառայության վայրի գորամասում, բացառությամբ եթե շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության ժամկետը գերազանցում է 17 ամիսը, կամ եղբայրը պարտադիր զինվորական ծառայություն է անցնում այնպիսի գորամասում, որտեղ ծառայություն անցնելու համար անհրաժեշտ պայմանները չեն բավարարվում գորակոչվող եղբոր կողմից, կամ ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության վայրի գորամասի համալրում նախատեսված չէ հայտարարված գորակոչի շրջանակներում»: Մինչ կատարված փոփոխությունը, գորակոչվող եղբոր համար օրենքով նախատեսված չէր արգելք ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության վայրի

գորամասում ծառայության անցնելու՝ նշված գորամասում համալրում նախատեսված չլինելու հիմքով:

2024 թ. ապրիլի 1-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում քննարկման դրվեց «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում (այուհետ՝ Օրենք) լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագիծը¹², որը վերաբերում է Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում առաջարկվող պարտադիր զինվորական ծառայության գորակոչվող եղբայրների կամ ծառայության մեջ եղբոր գտնվելու պարագայում մյուս եղբոր գորակոչի դեպքում նույն գորամասում ծառայելու պայմանների փոփոխություններին:

Նախագծում որպես իրավական ակտի ընդունման հիմնավորում ներակայացվում է գորակոչվող եղբորը զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր գորամաս ուղարկելու անհնարինությունը այն պարագայում, երբ գորակոչվող եղբայրը չունի համապատասխան մասնագիտացում (վարորդական իրավունք): Ըստ այդմ, առաջարկվում էր եղբոր ծառայության վայր ուղարկելու վերաբերյալ գորակոչվողի դիմումը մերժել այն դեպքերում, երբ տվյալ գորամասում համալրում նախատեսված է միայն մասնագիտական պաշտոններում նշանակելու համար և գորակոչվող եղբայրը չունի համապատասխան մասնագիտացում:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը խնդրահարույց է գնահատում նախագիծը մի շարք պատճառներով: Նախագծի հեղինակ ՀՀ պաշտպանության նախարարությունը որպես «համապատասխան մասնագիտացում» մատնանշել է «վարորդական իրավունքի» առկայությունը, ինչը նշանակում է, որ առաջարկվող փոփոխությամբ սույն դրույթը պարտավորեցնում է զինապարտ եղբայրներին ունենալ վարորդի մասնագիտացում: Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրենց իրավունքից օգտվելու համար: Մինչդեռ, գործնականում զինապարտ եղբայրները կարող են վարորդի մասնագիտացում չունենալ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Նման կարգավորումը խտրական է այն գորակոչիկների նկատմամբ, ովքեր չունեն նույն մասնագիտացումը, ինչ զինվորական ծառայության մեջ գտնվող իրենց եղբայրները: Բացի այդ, հայտարարված գորակոչի շրջանակներում ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության վայրի գորամասի

¹² <https://www.e-draft.am/projects/7066/justification>

համայրում նախատեսված չլինելու հանգամանքը ևս խոչընդոտում է եղբայրների նույն գորամասում ծառայության անցնելուն:

Ելնելով այն հանգամանքից, որ միաժամանակ գորակոչվող եղբայրների կամ ծառայության մեջ եղբոր գտնվելու պարագայում մյուս եղբոր գորակոչի դեպքերը օբյեկտիվորեն չեն կարող զգալի լինել, և չեն կարող բացասաբար ազդել բանակի մարտունակության վրա, ինչպես նաև այն հանգամանքից, որ եղբայրների միասին ծառայությունը բխում է զինծառայողների լավագույն շահերից այն իմաստով, որ գորակոչվող եղբայրը կկարողանա ավելի հեշտությամբ ինտեգրվել զինվորական ծառայությանը՝ զինծառայող եղբոր աջակցության շնորհիվ, որն իր հերթին կնպաստի վերջինիս ծառայողական պարտականությունների պատշաճ կատարմանը, ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկեց Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված եղբայրների նույն գորամասում ծառայության անցնելու մասին դրույթի կիրառման հիմքում չդնել ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության վայրի գորամասի համայրում նախատեսված չլինելու հանգամանքը և գորակոչվող եղբոր մասնագիտացումը, հնարավորությունն ընձեռելով եղբայրներին ծառայելու նույն գորամասում:

Առաջարկությունը ՀՀ ՊՆ կողմից չի ընդունվել՝ պատճառաբանությամբ, որ փոփոխությունների կատարման նպատակն է «լուծել պրակտիկայում առաջացած խնդիրը», միաշամանակ նշելով, որ «Անկաճ դեպքերի քանակից, գործընթացի չգարգավորված լինելն առնվազն հանգեցնում է կամ օրենքի պահանջների խախտման, կամ գորամասի համայրման գործընթացում խնդիրների առաջացման»:

✓ Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը լրացվեց հետևյալ բովանդակությամբ «ինչպես նաև ըստ անհրաժեշտության մարտական հերթապահության ներգրավելու» բառերով: Այսինքն, եթե մինչ 2023 թ. ապրիլը պահեստագորային պատրաստության շրջանակներում օրենքով սահմանվում էր միայն վարժական հավաքների իրականացում՝ պահեստագորում հաշվառված քաղաքացիների ռազմական ունակությունները կատարելագործելու և նրանց վերապատրաստելու նպատակով, ապա 2023 թ. ապրիլից պահեստագորային պատրաստության շրջանակներում քաղաքացիների վրա պարտավորություն դրվեց նաև մարտական հերթապահության ներգրավելու:

Սույն փոփոխությունը գնահատում ենք բացասական այն իմաստով, որ գործնականում վարժանքների և ֆիզիկական պատրաստվածության համար նախատեսված է շատ կարճ ժամանակահատված՝ մոտ 7 օր, որը բավարար չէ մարտական հերթապահության իրականացմանը պատշաճ պատրաստվելու համար:

✓ Օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասը լրացվեց նոր նախադասությամբ, հետևյալ բովանդակությամբ. «Հայտարարված վարժական հավաքին չի կարող կանչվել այն քաղաքացին, որը պատիժ է կրում ազատազրկման կամ կարճաժամկետ ազատազրկման ձևով, կամ որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, բացառությամբ քաղաքացու նկատմամբ վարժական հավաքներից խուսափելու պատճառով հարուցված քրեական հետապնդման, եթե քաղաքացին գրավոր ցանկություն է հայտնել ներգրավվելու հայտարարված վարժական հավաքին»:

Կատարված փոփոխությունը գնահատում ենք դրական այն իմաստով, որ հատկապես անձանց համար, ովքեր գտնվում են քրեական հետապնդման մեջ, քրեական վարույթների շրջանակներում ներգրավված են որպես մեղադրյալ, և ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում չափազանց կարևոր է քրեական գործի շրջանակներում իրականացվող անհետաձգելի քննչական և դատավարական գործողություններին ներկայությա ապահովումը:

✓ Օրենքի 59-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասության «դեպքում» բառը փոխարինվեց « ինչպես նաև սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով կամ «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմաններ չունենալու դեպքերում» բառերով: Այսինքն, հստակեցվեց վարժական հավաքներին ոչ ենթակա անձանց ցանկը, որը ներառում է բուժհետազոտման արդյունքներով վարժական հավաքի կանչվելու ոչ ենթակա, ՀՀ կառավարության սահմանած կարգով ամրագրված, չորս և ավելի երեխա ունեցող քաղաքացիներին, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր կամ ՀՀ կառավարության անդամ կամ դատավոր կամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ հանդիսացող քաղաքացիներին, Մարդու իրավունքների պաշտպանին, ինչպես նաև ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր ունեցող ընտանիքի միակ արու զավակ հանդիսացող կամ ՀՀ զինված ուժերում կամ այլ զորքերում

կամ ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր ունեցող քաղաքացիներին:

Կատարված փոփոխությունը գնահատում ենք դրական, քանի որ պարբերական հաճախականությամբ ՀՀ վարժական հավաքների կազմակերպելու մեկնարկից ի վեր՝ 2021 թվականից Կազմակերպությունը ՀՀ պաշտպանության նախարարությանն առաջարկում էր հստակեցնել վարժական հավաքներին ոչ ենթակա անձանց ցանկը, որպիսին առկա է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակոչվող անձանց դեպքում:

✓ Օրենքի 59-րդ հոդվածի 9-րդ մասը լրացվեց նոր նախադասությամբ՝ «... խաղաղ ժամանակ հայտարարված վարժական հավաքներին կարող են կանչվել մինչև 15-ը ներառյալ աշխատող ունեցող միևնույն գործատուից (մարմնից, կազմակերպությունից)՝ առավելագույնը մեկ աշխատող, 16-ից մինչև 30-ը ներառյալ աշխատող ունեցող միևնույն գործատուից (մարմնից, կազմակերպությունից)՝ առավելագույնը երկու աշխատող, իսկ 30-ից ավելի աշխատող ունեցող միևնույն գործատուից (մարմնից, կազմակերպությունից)՝ աշխատողների ընդհանուր թվի ոչ ավելի, քան հինգ տոկոսի չափով աշխատողներ»:

- *2023 թ. մայիսի 26-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց օրենք «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-239-Ն¹³) օրենքը:*

✓ Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը «ամիս» բառից հետո լրացվեց «իսկ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համար դիմած իգական սեռի քաղաքացիների համար՝ 6 ամիս» բառերով:

Փաստացի, սույն կարգավորմամբ կանանց հնարավորություն ընձեռվեց կամավոր հիմունքներով անցնել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության 6 ամիս ժամկետով: Սահմանվեցին կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համար դիմած կանանց գորակոչի կազմակերպման ընթացակարգերը. ծառայության անցնելու համար դիմում ներկայացնելու կարգը և ժամկետները, պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելուց հրաժարվելու կարգը: Նշված օրենսդրական փոփոխությամբ սահմանվեց,

¹³ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=180534>

որ 6-ամսյա ծառայությունը հաջողությամբ ավարտած կանայք ստանում են մեկ միլիոն դրամ պատվովճար և «Պաշտպան հայրենյաց» ծրագրի շրջանակներում ծառայությունը շարունակելու հնարավորություն: Ձինված ուժերում կանանց իրավունքների վիճակի մասին Կազմակերպության 2023 թ. իրականացրած ուսումնասիրությունը ներկայացված է **«Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ զինված ուժերում» զեկույցում**⁴:

Կազմակերպության կողմից ներկայացվեցած առաջարկությունների մի մասը ՀՀ ՊՆ կողմից ընդունվել է ի գիտություն: Առաջարկությունները ներկայացված են ստորև.

1. Մշակել կին զինծառայողների 6-ամսյա ծառայության համար անհրաժեշտ զինվորական պատրաստության ծրագրեր, զինվորական ծառայության կազմակերպումն ապահովող օրենսդրական կարգավորումները մշակելիս ապահովել ոլորտի մասնագետ կանանց անմիջական մասնակցությունը օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակման աշխատանքներում, ինչպես նաև օրենսդրական փոփոխության նախագիծը ներկայացնել հանրային քննարկման:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զինծառայողների մեծամասնությունը զինվորական ծառայության է անցնում ֆինանսական խնդիրների լուծման նպատակով Կառավարությունը անհրաժեշտ ջանքեր պետք է գործադրի զինվորական ծառայության անցնելու այլ շարժառիթների խթանման ուղղությամբ, մասնավորապես՝ զինվորական մասնագիտության գրավչությունը և հանրության շրջանում զինվորական ծառայության նկատմամբ հարգանքը բարձրացնելու ուղղությամբ:

3. Ձինվորական ծառայության կազմակերպման վերաբերյալ կարգավորումներում պետք է կատարել անհրաժեշտ փոփոխություններ բացառելու համար խտրականության դրսևորումների հավանականությունն օրենսդրության մակարդակում (կանանց տրամադրվող զինատեսակների սահմանափակման հարցում, վերակարգի նշանակման գործընթացում, տույժերի կիրառման տարբերակված մոտեցման հարցում): Գործադրել անհրաժեշտ ջանքեր՝ կրթական, պարբերական վերապատրաստման ծրագրերի միջոցով, կին զինծառայողների նկատմամբ առկա ակնհայտ խտրական մտածելակերպի, կարծրատիպերի հաղթահարման ուղղությամբ:

¹⁴ <https://hcav.am/wp-content/uploads/2024/03/%D4%B6%D4%B5%D4%BF%D5%88%D5%92%D5%85%D5%91-%D4%BF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B6%D6%81-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%AB%D5%B3%D5%A1%D5%AF%D5%A8-%D5%80%D5%80-%D4%B6%D5%88%D6%82-%D5%B8%D6%82%D5%B4-ARM.pdf>

4. Անհրաժեշտ փոփոխություններ կատարել նաև օրենսդրական կարգավորումներում առկա ձևակերպումներում և զինվորական կոչումներ զբաղեցնող զինծառայողների թվում չտարանջատել կանանց՝ «կին զինծառայող» ձևակերպմամբ:

5. Ձևավորել զինված ուժերում կին զինծառայողների իրավունքների, արժանապատվության պաշտպանությունն ապահովող իրավական երաշխիքներ, թե զինված ուժերում նրանց ներգրավման, թե զինվորական ծառայության ընթացքում: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունի զինված ուժերում բարեվարքության կանոնների ներդրումը, որոնց բացակայությունը՝ բացասաբար ազդելով տղամարդ զինծառայողների զինվորական ծառայության, զինվորական պարտավորությունների կատարման վրա, էլ ավելի բացասական ազդեցություն է ունենում կին զինծառայողների իրավունքների երաշխավորման և ծառայողական պարտականությունների կատարման վրա: Մասնավորապես, բարեվարքության կանոնների խիստ պահպանումը կարևոր նշանակություն ունի ենթակա-հրամանատար հարաբերություններում գոյություն ունեցող խնդիրները, կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները, հովանավորչությունը բացառելու հարցում:

6. Ստեղծել խտրականության դրսևորումների դեպքերով բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ՝ միաժամանակ խրախուսելով զինծառայողներին գործնականում կիրառել նման մեխանիզմները՝ իրավահավասարության խթանման նպատակով: Մասնավորապես, զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիոն դեպքերում անանուն հաղորդման SS հավելվածի մշակմանը զուգտնթաց երաշխավորել զինծառայողների իրազեկման բարձր մակարդակը՝ այն արդյունավետ կերպով կիրառելու համար:

7. Խթանելով կին զինծառայողների ծառայողական առաջխաղացմանը հնարավորությունները՝ նպաստել համակարգային և ռազմավարական ոլորտներում որոշումների կայացման գործընթացում կին զինծառայողների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

8. Երաշխավորել անկախ սեռից բոլոր զինծառայողների համար հավասար հնարավորությունների ստեղծումը ռազմական կրթության, մասնագիտական

կարողությունների զարգացման վերապատրաստումներին մասնակցելու, ծառայողական առաջխաղացման համար՝ անկախ սեռային պատկանելությունից:

9. Օրենքով սահմանել երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածը հերթական զինվորական կոչում շնորհելու համար հաշվի առնելու դրույթը, որը կխթանի կին զինծառայողների ծառայողական առաջխաղացմանն ու ներկայացվածությանը բարձր պաշտոններում:

10. Բացառել գործնականում առկա այն դեպքերը, երբ հղիության և ծննդաբերության արձակուրդ մեկնած կին զինծառայողներին հրամանատարները համոզում են չվերադառնալու ծառայության:

11. Բոլոր զինծառայողների համար ապահովել արժանապատիվ ծառայության նվազագույն պայմաններով՝ թե շենքային, թե կենցաղ-սպասարկման, թե հիգիենայի պահպանման:

12. Ջանքեր գործադրել բոլոր զինծառայողներին, այդ թվում նաև հղի կին զինծառայողներին հարմարավետ և որակյալ զինվորական համազգեստի տրամադրման ուղղությամբ:

13. Հաշվի առնելով ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի և դրա հիման վրա մշակված ՀՀ ԳԱԾ-ի մասին զինծառայողների իրազեկվածության ոչ բավարար մակարդակը՝ երաշխավորել իրազեկման դասընթացներին, միջոցառումներին, քննարկումներին բոլոր զինծառայողների պարբերական մասնակցությունը:

14. Զինված ուժերում իրականացնել մարդու իրավունքների, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, հակախտրականության, կանանց նկատմամբ բռնության արգելքի մասին թեմաներով ուսուցում, որի շնորհիվ վերջիններս կկարողանան պաշտպանել իրենց իրավունքները զինվորական ծառայության հետ կապված տարբեր ոլորտներում:

15. ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում և այլ առցանց հարթակներում ապահովել զինված ուժերում կին զինծառայողների ներգրավվածությունը լուսաբանող նութերի (լուսանկարներ, տեսահոլովակներ, հոդվածներ, մամուլի հաղորդագրություններ) տեսանելիությունը, ինչը կնպաստի զինվորական ծառայության գրավչության բարձրացմանը թե կին, թե տղամարդ զինծառայողների շրջանում:

- 2024 թվականի հունվարի 16-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց օրենք «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-23-Ն¹⁵) օրենքը:

✓ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը լրացվեց 1.1-ին և 1.2-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. «1.1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա են նաև 27 տարին լրանալուց հետո օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած և մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը 12 ամսից պակաս ժամկետով այլ պետությունում զինվորական կամ 18 ամսից պակաս ժամկետով այլընտրանքային ծառայություն անցած կամ այդպիսի ծառայություն չանցած մինչև 37 տարեկան արական սեռի քաղաքացիները: Սույն մասում նշված քաղաքացին սույն օրենքի 21-րդ հոդվածի (Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմքերը) 1-ին, 2-րդ և 5-րդ մասերով, 23-րդ հոդվածի (Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում տալը) 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով և 24-րդ հոդվածի (Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տալը) 1-ին մասով սահմանված պայմանները չբավարարելու դեպքում կարող է 12 ամիս ժամկետով պարտադիր զինվորական կամ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում այլընտրանքային ծառայություն անցնելու փոխարեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ և ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից:

Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքը լրացած և սույն օրենքի կամ 2021 թվականի հունվարի 1-ին ուժը կորցրած «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները

¹⁵ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=189404>

կարող են մինչև 37 տարին լրանալը, իսկ պահեստագործի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները մինչև 45 տարին լրանալն իրենց ցանկությամբ զորակոչվել շարքային կազմի կամ պահեստագործի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության՝ **24 ամիս ժամկետով, կամ 12 ամիս ժամկետով՝** Հայաստանի Հանրապետության **պետական բյուջե վճարելով երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ,** կամ **վեց ամիս ժամկետով՝** Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով **հինգ միլիոն** Հայաստանի Հանրապետության դրամ, կամ **մեկ ամիս ժամկետով՝** Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով **ութե միլիոն** Հայաստանի Հանրապետության դրամ, եթե չունեն սույն օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստագործի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք, կամ **պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության չզորակոչվել՝** Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով **տասնհինգ միլիոն** Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասի համաձայն՝ օրենքի խախտմամբ շարքային կազմի կամ պահեստագործի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած և համապատասխանաբար 27 կամ 35 տարին լրանալուց հետո սույն օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստագործի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության և պարտավոր են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասի իմաստով՝ օրենքի պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած է համարվում Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի նկատմամբ շարքային կազմի կամ պահեստագործի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում, կամ որը, «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, զինվորական հաշվառման կանգնելու համար դիմել է 27 տարին լրանալուց հետո:»:

Սույն փոփոխությունը դրական է այն իմաստով, որ մինչ այդ գործող իրավակարգավորմամբ այն անձանց համար, ովքեր սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չէին անցել և 27 տարին լրանալու հիմքով այլևս ենթակա չէին ժամկետային զինվորական ծառայության, որպես պատիժ նախատեսված էր միայն քրեական պատասխանատվությունը, իսկ սույն փոփոխությամբ վերջիններիս հնարավորություն է ընձեռվում խուսափել քրեական պատասխանատվությունից՝ սահմանված չափով գումար վճարելու դեպքում անցնելով պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն ամբողջ կամ կարճ ժամկետում կամ ընդհանրապես ազատվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից: Միաժամանակ, նշված փոփոխությունը բացասական է այն իմաստով, որ այն պարունակում է սոցիալական անարդարության տարրեր, քանի որ սոցիալապես առավել ապահով անձինք կարող են ուղղակիորեն ազատվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից վճարելով սահմանված չափի գումարի, իսկ նրանք, ովքեր չունեն վճարելու հնարավորություն, անցնելու են պարտադիր ժամկետային զինվորական ծառայության՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար:

- *2022 թ. դեկտեմբրի 22-ին ՀՀ կառավարությունն ընդունեց որոշում ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին, որոնք ուժի մեջ մտան 2023 թ. փետրվարի 1-ից և տարածվեցին 2023 թվականի ամառային և դրան հաջորդող գորակոչների վրա:*

Զնայած կատարված փոփոխություններին, որոշմամբ սահմանված որոշ դրույթներում դեռևս առկա են թերություններ և անհստակություններ.

- անձի մոտ 5 և ավելի հիվանդության առկայության դեպքում շեշտը դրվում է միայն հիվանդությունների քանակի վրա, նույն անձի մոտ միաժամանակ մի քանի հիվանդության պարագայում զինվորական ծառայության հնարավոր ծանրաբեռնվածության և ընդհանուր առողջական վիճակի և հնարավոր վատթարացման հանգամանքը չի դիտարկվում,

- միաժամանակ մի քանի հիվանդության դեպքում չի սահմանվում անձի զինվորական ծառայությանը պիտանիությունը որոշելու իրավական հիմքերը. անձի մոտ առկա

հիվանդությունները դիտարկում են մեկը մյուսից առանձին, անտեսելով անձի առողջական վիճակի ողջ պատկերը:

- որոշ իրավական ակտերում («Զինվորական ծառայության եվ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք) շարունակվում է կիրառվել «Զինվորական կոմիսարիատ» և ոչ թե «Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում» անվանումը:

- 2022 թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված և 2023 թվականի փետրվարի 1-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 2053-Ն¹⁶ որոշմամբ սահմանված փոփոխությունները տարածվեցին 2023 թվականի ամառայի և դրան հաջորդող գորակոչերի վրա:

Ինչպես ներկայացրել ենք «2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 թ. ձմեռային գորակոչերի ընթացքում գորակոչիկների իրավունքների վիճակի մասին» զեկույցում¹⁷, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-ն որոշման մեջ կատարված փոփոխություններով ներդրվեցին չափելիության նոր ու ժամանակակից սանդղակներ:

Կազմակերպության՝ տարիների ջանքերի, ջատագովության արդյունքում 2023 թ. ուժի մեջ մտած փոփոխություններով՝ Կառավարության 2018 թ. N 404-Ն որոշմամբ սահմանված ախտորոշումները համապատասխանեցվեցին Հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ վերանայմանը¹⁸ (2019):

Դեռևս 2019 թվականից սկսած ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկում էր¹⁹ ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշմամբ սահմանվող հիվանդությունները համապատասխանեցնել Հիվանդությունների միջազգային 10-րդ դասակարգմանը: Այդ նպատակով Կազմակերպությունը բազմիցս հանդիպումներ է ունեցել շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչների հետ՝ ընդգծելով խնդրի կարևորությունը:

¹⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172242>

¹⁷ <https://hcav.am/hcav-am-report-03-04-2023/>

¹⁸ <https://icd.who.int/browse10/2019/en#/F20-F29>

¹⁹ https://drive.google.com/file/d/1Alf5ou27JMqBmWLLwk5_0G11-9fluz3M/view?pli=1

Չնայած ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ իրականացրած փոփոխությունները դրական են, այնուամենայնիվ փորձաքննության իրականացման կարգի, առանձին հիվանդությունների ախտորոշման չափորոշիչների հետ կապված մնացել են խնդիրներ, որոնց վերաբերյալ Կազմակերպությունը մշակել է առաջարկություններ և դրանք ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարությանը: ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման մեջ 2022 թվականի դեկտեմբերի 22-ին կատարված և 2023 թ փետրվարի 1-ին ուժի մեջ մտած փոփոխություններն ամփոփված են Կազմակերպության «2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 թ. ձմեռային զորակոչերի ընթացքում զորակոչիկների իրավունքների վիճակի մասին» զեկույցում²⁰:

Չնայած ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններին, դրանում առկա թերությունները և անհստակությունները մնացել են անփոփոխ, օրինակ.

- սահմանված չեն հստակ ժամկետներ՝ ժամանակ ենթադրող («ձգձգվող») և հիվանդության բուժման բարդություն ենթադրող («բուժմանը դժվար ենթարկվող») որոշ ձևակերպումների համար: Մինչ ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման մեջ նոր փոփոխությունների ուժի մեջ մտնելը, ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկել էր հստակեցնել «ձգձգվող» կամ «բուժմանը դժվար ենթարկվող» հասկացությունները և սահմանել կոնկրետ ժամկետներ կամ ժամանակահատվածներ ըստ յուրաքանչյուր հիվանդության՝ ելնելով հիվանդության ախտորոշման համար անհրաժեշտ ժամանակից: Առաջարկությունը չի ընդունվել ՀՀ ՊՆ կողմից այն պատճառաբանությամբ, որ բուժման գործընթացում յուրաքանչյուր հիվանդության բուժման և ելքի համար գործնականում հնարավոր չէ որևէ ժամկետ սահմանել:

- քանի որ ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 404-Ն որոշմամբ սահմանված չէ սեզոնային հիվանդությունները (ալերգիա, անոթային հիվանդություններ և այլն) համապատասխան եղանակային պայմաններում փորձաքննելու դրույթը, գործնականում ևս հաշվի չեն առնվում դրանց բնույթն ու առանձնահատկությունները. չի սահմանվում հետազոտությունների ու փորձաքննությունների կազմակերպումը միայն

²⁰ <https://hcav.am/hcav-am-report-03-04-2023/>

համապատասխան եղանակային պայմաններում: Որպես կանոն, այն գորակոչիկները, ովքեր փորձաքննվում են իրենց սեզոնային հիվանդությունների դրսևորման ոչ ակնառու եղանակային պայմաններում և ճանաչվում են պիտանի զինվորական ծառայության համար, համապատասխան եղանակային պայմաններում փորձաքննվելու դեպքում տարկետում են ստանում:

Ջորակոչիկներին իրենց առողջական խնդիրների դրսևորման համապատասխան եղանակային պայմաններում չփորձաքննվելու արդյունքում անհնար է տալ օբյեկտիվ ախտորոշում, որի հետևանքով գորակոչիկները չեն համաձայվում իրենց առողջական վիճակի հետազոտությունների արդյունքների հետ:

- ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման բացատրական մասում որոշ հոդվածների փորձաքննության կարգը հակասում է նույն որոշման հավելված 1-ում իմպերատիվ կերպով գործող դրույթին:

- *2024 թվականի ապրիլի 18-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 534-Ն²¹) որոշումը»:*

✓ Կատարվեցին փոփոխություններ N 404-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկում, մասնավորապես՝ «Մտավոր հետամնացություն, ուսման հետ կապված խնդիրներ»-ին, «Կենտրոնական նյարդային համակարգի արատներ (զարգացման արատներ), օրգանական զարգացող հիվանդություններ»-ին և «Գիշերամիզության»-ը վերաբերող հոդվածներին:

Մտավոր հետամնացության խնդրի հետ կապված որոշումը մասնավորապես, սահմանվեց, որ.

- զինվորական ծառայության համար ոչ պիտանի են ճանաչվում չափավոր, ծանր և խորը աստիճանի մտավոր հետամնացություն, թեթև աստիճանի մտավոր, վարքային խանգարումներով մտավոր այլ և չճշտված հետամնացություն ունեցող գորչակոչիկները և զինծառայողները («ա» կետ),

²¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=191958>

- առանց վարքային խանգարումների ինտելեկտուալ անբավարար վիճակներ, ուսուցանման և գրագիտության հետ կապված խնդիրներ ունեցող գորակոչիկները և զինծառայողները ճանաչվում են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար («բ» կետ):

Ստացվում է, որ ինտելեկտուալ անբավարար և մանկավարժական բարձիթողի վիճակները, թեթև աստիճանի, այլ մտավոր և չճշտված մտավոր հետամնացությունները, որոնք չեն ուղեկցվում վարքի կամ հարմարվողականության խանգարումներով, ինչպես նաև նաև ուսուցանման և գրագիտության հետ կապված խնդիրները (գրագիտության ցածր մակարդակը, անձի պրիմիտիվությունը) խոչընդոտ չեն հանդիսանում զինվորական ծառայության անցնելու համար:

Փոփոխության նախագծի հեղինակ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից որպես [հիմնավորում](#) նշվել է այն հանգամանքը, որ 2019 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում «մտավոր հետամնացություն» ախտորոշմամբ պարտադիր զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված գորակոչիկների թիվն ավելացել է. 2020 թվականի ամառային գորակոչի ընթացքում նշված ախտորոշմամբ ոչ պիտանի է ճանաչվել 188 գորակոչիկ, իսկ 2022 թվականի ձմեռային գորակոչի ընթացքում՝ 321 գորակոչիկ:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարար [Սուրեն Պապիկյանի](#) «առանց վարքային խանգարումների մանկավարժական բարձիթողի վիճակ» ունեցող զինծառայողները չեն ընդգրկվի մարտական հերթապահության մեջ, կարգելվի նրանց վարել տրանսպորտային միջոցներ և տեխնիկա, ղեկավարել անձնակազմ:

Ակնհայտ է, որ միայն նշված սահմանափակումները չեն կարող ապահովել մտավոր խնդիրներ ունեցող զինծառայողների՝ զինվորական պարտականությունների արդյունավետ իրականացումը և առողջության վատթարացման կանխարգելումը:

Փաստացի, կատարված փոփոխությամբ ընդունվել է գորակոչիկների և զինծառայողների համար ոչ բարենպաստ և վերջիններիս իրավունքների վիճակը վատթարացնող իրավական ակտ:

Ըստ կառավարության, նման փոփոխության նպատակը կոռուպցիոն ռիսկերի նվազեցումն է, որոնք դրսևորվում են փաստաթղթերի կեղծման միջոցով: Մինչդեռ ակնհայտ

է, որ առողջական խնդիրներով անձանց զինվորական ծառայության գորակոչելով կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման խնդիրը չի կարող լուծել: Ընդհակառակը, պաշտպանական համակարգում կոռուպցիոն դրսևորումները պետք է վերացվեն ինստիտուցիոնալ և համակարգային փոփոխությունների իրականացմամբ, որոնք հիմնված են մարդու իրավունքների, օրենքի գերակայության սկզբունքի վրա:

Մյուս փոփոխությունը, որը կատարվել է 2024 թվականի ապրիլի 18-ին ՀՀ կառավարության N 534-Ն որոշմամբ վերաբերում է կենտրոնական նյարդային համակարգի արատներին (նորագոյացություններ, կիստաներ և այլն): Մասնավորապես, եթե նախկինում չափավոր կամ աննշան արտահայտված գործառույթների խանգարումով և դանդաղ զարգացող ընթացքով կենտրոնական նյարդային համակարգի արատների, օրգանական զարգացող հիվանդությունների առկայության պարագայում սահմանվում էր, որ գորակոչիկներն ու զինծառայողները ոչ պիտանի են զինվորական ծառայության համար, ապա ներկայումս ոչ պիտանի են ճանաչվում միայն գործառույթների չափավոր արտահայտված խանգարումով և դանդաղ զարգացող ընթացքով կենտրոնական նյարդային համակարգի արատներ ունեցող անձինք («բ» կետ), իսկ նույն հիվանդության գործառույթների աննշան արտահայտված խանգարման կամ առանց գործառույթների խանգարման կամ կլինիկական դրսևորումների բացակայության պարագայում անձինք ճանաչվում են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար:

Պաշտպանության նախարարությունը վկայակոչել է այն հանգամանքը, որ կիստաների 0,5 սմ և ավելի մեծ չափերի առկայության դեպքում, անգամ առանց կլինիկական դրսևորումների և ախտաբանական փոփոխությունների, գորակոչիկները ճանաչվում են ոչ պիտանի զինվորական ծառայության համար, ընդգծելով, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման պահանջներին տեղեկացված լինելու արդյունքում տարեցտարի ավելանում է գորակոչիկների թիվը, ովքեր արդի սարքավորումներով հետազոտվելու դեպքում ազատվում են զինվորական ծառայությունից՝ նշված ախտորոշմամբ: Ընդ որում, նախագծի հիմնավորմամբ՝ նշված ախտորոշմամբ գորակոչիկներին հետազոտելու և փորձաքննելու համար մեծ մասամբ հիմք են հանդիսանում իրենց իսկ նախաձեռնությամբ իրականացված ՄՌՏ հետազոտությունների արդյունքները: ՀՀ Կառավարության 2024 թվականի ապրիլի 18-ի նիստի ժամանակ ՀՀ

վարչապետը նշեց, որ «գլխուղեղի կիստաների առկայությունը հավաստող բժշկական հետազոտությունը երբեմն հնարավոր չի լինում նույնականացնել այն անձի հետ, ով ենթարկվել է այդ հետազոտության և կոռուպցիոն մեխանիզմի կիրառման արդյունքում», ըստ Վարչապետի, գորակոչիկներն ազատվում են զինվորական ծառայությունից: Ըստ ՀՀ ՊՆ-ի՝ 2023 թվականի ամառային գորակոչի ընթացքում քաղաքացիների կողմից ներկայացվել է ավելի քան 1400 ՄՌՏ հետազոտության տվյալ, որոնցից 737-ի դեպքում գորակոչիկները ճանաչվել են ոչ պիտանի զինվորական ծառայության համար, իսկ 2023 թվականի ձմեռային գորակոչի ընթացքում՝ ներկայացվել է ավելի քան 1000 հետազոտության տվյալ և այդ տվյալների հիման վրա իրականացված առողջական վիճակի հետազոտությունների և բժշկական փորձաքննության արդյունքում 220 գորակոչիկ ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

Նման պարագայում անհրաժեշտ է ոչ թե վերացնել նշված առողջական խնդրով պայմանավորված գորակոչիկների՝ զինվորական ծառայությունից ազատվելու դրույթը՝ ծառայության ընթացքում խնդրի վատթարացման դեպքում նրանց կյանքն ու առողջությունը վտանգելով, այլ ընդլայնել գորակոչիկներին համալիր հետազոտության ենթարկելու համար նախատեսված պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցները և ապահովել բոլոր գորակոչիկների առողջության իրական վիճակի գնահատումը կամ առողջական խնդիրների բացահայտումը՝ համալիր հետազոտությունների իրականացման միջոցով:

Ինչ վերաբերում է գիշերամիզությանը (էնուրեզ), ապա 2024 թվականի ապրիլի 18-ին ՀՀ կառավարության N 534-Ն²² որոշմամբ կատարված օրենսդրական փոփոխությամբ՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողները, ովքեր նախկինում, ըստ ՀՀ ՊՆ-ի, ծառայության ընթացքում յուրաքանչյուր վեց ամիսը մեկ փորձաքննության ենթարկվելուց հետո՝ հաստատված և առանց նյարդային, հոգեբուժական կամ միզասեռական համակարգի հիվանդությունների ախտանիշներ դեպքում ճանաչվում էին ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար և վաղաժամ գորացրվում զինվորական ծառայությունից, նոր կարգավորմամբ ճանաչվում են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և շարունակում զինվորական ծառայությունը: *Ակնհայտ է, որ զինված ուժերում*

²² <https://www.arlis.am/documentview.aspx?docid=191958>

նման խնդրով ի սկզբանե զինվորական ծառայության գորակոչված զինծառայողները նույնիսկ հատուկ, առանձնացված գորամասերում ծառայության նշանակվելու դեպքում ենթարկվում են խարանավորման, որը կարող է հանգեցնել ծանր հոգեբանական վիճակների, դեպրեսիայի, լարվածության, որոնք իրենց հերթին կարող են բացասաբար ազդել ծառայողական պարտականությունների կատարման արդյունավետության, զինվորական կարգապահության և միջանձնային փոխհարաբերությունների վրա:

ՀՀ ՊՆ-ի կողմից որպես կառավարության որոշման փոփոխության նախագծի հիմնավորում ներկայացվել է 2022 թվականին զինվորական ծառայության ընթացքում գիշերամիզության առաջին անգամ հայտնաբերման 10 դեպքի, 2023 թվականի ընթացքում 33 դեպքի մասին, որոնց դեպքում զինծառայողները օրվա հեշտացված կարգացուցակով ծառայություն անցնող ևս 66 զինծառայողների հետ միասին վաղաժամկետ արձակվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից:

2024 թվականի մարտին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղված գրությամբ հայտնել էր սույն դրույթը անփոփոխ թողնելու անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով նշված խնդրով զինվորական ծառայությունից վաղաժամ գորացրված զինծառայողների ոչ մեծ թիվը:

Մինչդեռ, ՀՀ ՊՆ-ն դրույթն անփոփոխ թողնելը համարեց ոչ նպատակահարմար, տեղեկացնելով, որ «գիշերամիզություն ունեցող որևէ զինծառայողի խարանի ենթարկելու կամ հոգեբանական ծանր կացության մեջ դնելու կամ դեպրեսիայի կամ ինքնասպանության փորձի և ինքնասպանության հասցնելու դեպք չի արձանագրվել»:

Նշենք, որ դեռևս 2018 թվականին, երբ Կառավարության N 404-Ն որոշմամբ սահմանվեց գիշերամիզությամբ գորակոչիկների զինվորական ծառայությանը պիտանիության դրույթը, արձանագրվեցին խնդիրներ²³ ծառայության իրականացման ընթացքում վերջիններիս խարանավորման հետ կապված, երբ, օրինակ, ըստ զինծառայողներին հասած տեղեկությունների՝ արձակման դուրս գալիս գորամասի մոտակայքում ապրող բնակիչները գիտեն իրենց առողջական խնդրի մասին, ինչը անձնական կյանքի գաղտնիության իրավունքի խախտման հետևանք է:

²³ <https://razm.info/132181>

Այսպիսով, 2024 թվականի ապրիլի 18-ին ՀՀ կառավարության N 534-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները խոցելի են դարձնում գորակոչիկների և զինծառայողների իրավունքները, փոփոխությունը հանդիսանում է գորակոչիկների և զինծառայողների իրավունքների վիճակը վատթարացնող իրավական ակտ, քանի որ գորակոչիկներին մտավոր հետամնացության առկայությամբ զինվորական ծառայությանը պիտանի ճանաչելու դեպքում իրականացված փոփոխությունները պարունակում են վերջիններիս առողջական վիճակի վատթարացման ռիսկեր, գիշերամիզության առկայությամբ գորակոչիկներին և զինծառայողներին զինվորական ծառայությանը պիտանի ճանաչելու դեպքում նման խնդիրներով զինծառայողները կհայտնվեն հոգեբանական ավելի ծանր վիճակում՝ իրենց նկատմամբ իրական խարանի դրսևորումների հետևանքով:

Ինչ վերաբերում է կիստաների ախտորոշմանը, անհրաժեշտ է գորակոչիկներին ենթարկել համալիր բժշկական հետազոտությունների պետական միջոցներով և ոչ թե թողնել այդ պարտականությունը քաղաքացիների վրա: Միաժամանակ անհրաժեշտ է գորակոչիկների բժշկական հետազոտությունների ցանկում ներառել նաև թանկարժեք բժշկական հետազոտությունների իրականացումը՝ խուսափելու համար թերի և ոչ օբյեկտիվ հետազոտությունների իրականացման արդյունքում գորակոչիկներին պարտադիր ժամկետային զինվորական ծառայության համար պիտանի ճանաչելու և դրա հետևանքով վերջիններիս առողջական վիճակի վատթարացման և իրավունքների խախտման ռիսկերը:

Ինչպես արձանագրել էինք «2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 թ. ձմեռային գորակոչերի ընթացքում գորակոչիկների իրավունքների վիճակի մասին» Կազմակերպության զեկույցում²⁴ ներկայումս ևս քաղաքացիների շրջանում կա անվստահություն գորակոչի բժշկական հանձնաժողովների աշխատանքի օբյեկտիվության հանդեպ:

²⁴ <https://hcav.am/hcav-am-report-03-04-2023/>

2023 թ. ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2023 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում զորակոչի, զինվորական հաշվառման և հետ կալված հարցերով Կազմակերպություն է դիմել 172 անձ, որոնցից՝

- 96 (56%) զորակոչիկ,
- 64 (37%) պահեստագործում հաշվառված անձ,
- 8 (5%) զինվորական հաշվառման ենթակա անձ,
- 4 (2%) օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայություն չանցած անձ:

Աղյուսակ 1. 2023 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում Կազմակերպություն դիմած անձանց թիվը.

Թիրախ խումբ	Թիվը
Զորակոչիկ	96
Պահեստագործում հաշվառված անձ	64
Զինվորական հաշվառման ենթակա անձ	8
Օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայություն չանցած անձ	4
Ընդամենը	172

Նշենք, որ 2022 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում Կազմակերպություն է դիմել 116 անձ, որոնցից 56-ը՝ զորակոչիկ, 48-ը՝ պահեստագործում հաշվառված անձ, 5-ը՝ զինվորական հաշվառման ենթակա անձ, 7-ը՝ օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայություն չանցած անձ:

2023 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում Կազմակերպությանը դիմած անձանց թիվը 2022 թվականի համեմատ ավելացել է 48%-ով, մասնավորապես՝ զորակոչիկների թիվն ավելացել է 71 %-ով, պահեստագործում հաշվառված քաղաքացիների թիվը՝ 33 %-ով:

Զորակոչիկների դիմելիության բարձր ցուցանիշը 2023 թ. ամառային և ձմեռային զորակոչերին պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից գլխավորը ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-ն որոշման մեջ կատարված փոփոխություններ են, որոնց արդեն անդրադարձել ենք:

Ըստ աշխարհագրական տարածքների Կազմակերպությունն դիմած գորակոչիկների, զինվորական հաշվառման ենթակա, պահեստագործում հաշվառված և օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայության չանցած անձանց թիվը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. 2023 թ. ամառային և ձմեռային գորակոչին Կազմակերպությանը դիմած անձանց թիվն ըստ աշխարհագրական տարածքների

Դիմած անձանց բանկության վայրերն ըստ մարզերի	Զորակոչիկ	Զինվորական հաշվառման ենթակա անձ	Պահեստագործում հաշվառված անձ	Օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայության չանցած անձ	Ընդամենը
Լոռի	49	5	6	1	6
Երևան	9	1	13		2
Շիրակ	9				9
Կոտայք	3		5		3
Արմավիր	1		2		1
Տավուշ	1		1		1
Գեղարքունիք	1				1
Արարատի մարզ	2				2
Սյունիք			1		1
Արագածոտն	2		1		2
Արտերկիր	1			2	1
Բնակչության վայրը չի հայտնել	18	2	35	1	5
Ընդամենը	96	8	64	4	17

2023 թ. գորակոչերի ընթացքում առավել մեծ թվով **գորակոչիկներ, զինվորական հաշվառման ենթակա և պահեստագործում հաշվառված անձինք** դիմել են **Լոռու** մարզից (49, 5 և 6 համապատասխանաբար), **Շիրակի** մարզից (9 գորակոչիկ), **Կոտայքի** մարզից (3 գորակոչիկ և 5 պահեստագործում հաշվառված քաղաքացի) և **Երևան** քաղաքից (9, 1 և 13 համապատասխանաբար):

2023 թվականի ամառային և ձմեռային գորակոչերի ընթացքում դիմած անձանց մեծամասնության՝ **118 հոգու (68 %)**, մասնավորապես՝ **գորակոչիկներից 84-ի (88%)**, **պահեստագործում** հաշվառված անձանցից **30-ի (47%)**, **զինվորական հաշվառման ենթակա** անձանցից **4-ի (50%)** խնդիրը վերաբերել է **առողջական վիճակի** ոչ պատշաճ բժշկական գննության և փորձաքննության իրականացմանը, բժշկական եզրակացության հետ անհամաձայնությանը, ՀՀ կառավարության 2018 թ. 404-Ն որոշմամբ սահմանված զինվորական ծառայության համար քաղաքացու պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի համապատասխան առկա առողջական խնդիրներով զինծառայությանը պիտանիության վերաբերյալ հարցի, առողջական խնդիրների առկայության պայմաններում վարժական հավաքների ներգրավելու իրավաչափության և նմանատիպ այլ հարցերի պարզաբանմանը:

Զորակոչիկներից 9-ը (9%) ահազանգել են ՀՀ ՊՆ գորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների կողմից գորակոչի շրջանակներում իրականացված **առողջական վիճակի հետազոտությունների արդյունքների չտրամադրման** մասին: *Ի դեպ, 2024 թ. ամառային գորակոչի ընթացքում գորակոչիկներին իրենց առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերը հասանելի են հիմնականում Արմեդ համակարգի միջոցով:*

Զինվորական հաշվառման ենթակա անձանցից **2-ը** դիմել է պարտադիր զինվորական ծառայությունից **տարկետման իրավունքի** վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով (1-ը՝ ուսման հիմքով, 1-ը՝ ընտանեկան պայմաններից ելնելով):

Պահեստագործում հաշվառված անձանցից **22-ը** դիմել **վարժական հավաքներին ենթակա լինելու իրավաչափության վերաբերյալ** խորհրդատվություն ստանալու նպատակով (աշխատանքի և վարժական հավաքների մասնակցելու համատեղելիության, ընտանեկան պայմաններից ելնելով վարժական հավաքներին

մասնակցելու իրավաչափության), 4-ը՝ վարժական հավաքներից խուսափելու իրավական հետևանքների վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով:

Ձորակոչիկներից 2-ը և պահեստագործում հաշվառված անձանցից 1-ը դիմել է ԼԳԲՏ համայնքի անձանց զինապարտության վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով:

Մյուս անձանց խնդիրները կապված են եղել տարբեր այլ հարցերի և իրավական ընթացակարգերի պարզաբանման հետ, որը ներկայացված է *Աղյուսակ 3-ում*:

Աղյուսակ 3. Գազմակերպություն դիմած գորակոչիկների, զինվորական հաշվառման ենթակա անձանց, պահեստագործում հաշվառված անձանց և սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների խնդիրներն ըստ յուրաքանչյուր գորակոչի

Խնդիր	2023 թ. ամառային գորակոչ			2023 թ. ձմեռային գորակոչ				Ընդամենը
	Զորակոչիկ	Զին հաշվ. ենթ. անձ	Պահեստագործում հաշվառված անձ	Զորակոչիկ	Զին հաշվ. ենթ. անձ	Օր. պահ խախտ. զինծ. չանցած անձ	Պահեստագործում հաշվ. անձ	
Առողջական խնդիրներ /ոչ պատշաճ բժշկական օգնություն ստանալու, առողջական վիճակի զննության արդյունքների հետ անհամաձայնություն	54			30	4			88
Առողջական խնդիրների առկայությամբ պահեստագործայինների վարժական հավաքների կանչվելու իրավաչափության վերաբերյալ խորհրդատվություն			20				10	30
Զորակոչի շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքների չտրամադրման իրավաչափության վերաբերյալ խորհրդատվություն	4			5				9
Ընտանեկան դրության պայմաններից ելնելով վարժական հավաքների կանչվելու իրավաչափության վերաբերյալ խորհրդատվություն			5				3	8

Վարժական հավաքների ներգրավելու իրավական հիմքերի վերաբերյալ խորհրդատվություն			7					7
Աշխատանքով պայմանավորված վարժական հավաքների մասնակցության վերաբերյալ խորհրդատվություն			5				2	7
Վարժական հավաքներից խուսափելու իրավական հետևանքների վերաբերյալ խորհրդատվություն			4					4
Օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայություն չանցնելու իրավական հետևանքների վերաբերյալ խորհրդատվություն						4		4
ԼԳԲՏ համայնքի անձանց զինապարտության վերաբերյալ և ծառայության անցնելու ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվություն	2		1					3
Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակոչից տարկետման հիմքերի վերաբերյալ խորհրդատվություն /ուսման հիմքով, ընտանեկան պայմաններից ելնելով/		2						2
Վարժական գորահավաքներին մասնակցելու ծանուցման կարգի վերաբերյալ խորհրդատվություն			2					2
Վարժական հավաքների կանչվելու դեպքում ԲՈՒՀ-ում սովորող անձանց կրթության իրավունքի ապահովման վերաբերյալ խորհրդատվություն			2					2
Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակոչված քաղաքացիների ծառայության վայրերի նշանակման մասին հրամանի դրույթների վերաբերյալ խորհրդատվություն	2							2

ՀՀ Կառավարության N 404-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ խորհրդատվություն	1							1
«Պաշտպան հայրենյաց» ծրագրով զինվորական ծառայության անցնելու պայմանների վերաբերյալ խորհրդատվություն	1							1
Առողջական վիճակի գննության նպատակով համապատասխան ուղեգրերի տրամադրման վերաբերյալ խորհրդատվություն/ ուղեգիր չտրամադրելու մասին ահազանգ				1				1
Քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու և անձնագրի տրամադրման կարգի վերաբերյալ խորհրդատվություն					1			1
Վարժական հավաքների ենթակա պահեստագործում հաշվառված անձանցից տարբեր անձնական փաստաթղթեր պահանջելու իրավաչափության վերաբերյալ խորհրդատվություն			1					1
Վարժական հավաքներին մասնակցելու ընթացքում պահեստագործում հաշվառված անձանց աշխատավարձի հաշվակման վերաբերյալ խորհրդատվություն			1					1
Վարժական հավաքներին որպես ըստ մասնագիտության/ որպես բժիշկ ներգրավվելու վերաբերյալ խորհրդատվություն			1					1
Անձի քաղաքացիությամբ պայմանավորված ՀՀ-ում վարժական հավաքներին կանչվելու պարտավորության վերաբերյալ խորհրդատվություն			1					1
«Քաղաքացիության մասին» և «Զինվորական ծառայության և զինծառայողի					1			1

կարգավիճակի մասին» ՀՀ օրենքների դրույթների վերաբերյալ խորհրդատվություն								
Զինվորական հաշվառման և կցագրման ընթացակարգի վերաբերյալ խորհրդատվություն	1							1
Մարտական գործողությունների ժամանակ գոհված անձի անձանց եղբայրների զինապարտության մասին խորհրդատվություն	1							1
Արտերկրում կրթություն ստանալու /ոչ ֆորմալ/ նպատակով անձնագրում ելքի թույլտվության ժամկետի երկարաձգման հնարավորության վերաբերյալ խորհրդատվություն	1							1
Եղբայրների նույն զորամասում զինվորական ծառայության անցնելու կարգավորման վերաբերյալ խորհրդատվություն	1							1
Այլընտրանքային ծառայության անցնելու կարգի վերաբերյալ խորհրդատվություն	1							1
Ընդամենը	64 /69 խնդիր	2	49 /50 խնդիր	32 /36 խնդիր	6	4	15	172 /182 խնդիր²⁵

²⁵ 2023 թ. ամառային և ձմեռային զորակոչների ընթացքում որոշ զորակոչիկներ դիմել են մի քանի խնդրով, այդ պատճառով արձանագրված խնդիրների թիվը գերազանցում է Կազմակերպությանը դիմած զորակոչիկների թվին:

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ՉՄԵՌԱՅԻՆ ՋՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՈՒՂԱՐԿՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

2023 թ. ամառային և 2023 թ. ձմեռային գորակոչերի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած բոլոր անձանց տրամադրվել է բանավոր խորհրդատվություն: Բացի այդ, **35** հոգու՝ **24** գորակոչիկի, պահեստագործում հաշվառված **10** անձանց և զինվորական հաշվառման ենթակա **1** անձի տրամադրվել է նաև գրավոր ընթացակարգով իրավական աջակցություն, որի շրջանակներում ուղարկվել է 41 գրություն ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայություն:

24 գորակոչիկներից 22-ի խնդիրը կապված է եղել առողջական խնդիրների, դրանց առկայությամբ զինծառայությանը պիտանիության իրավաչափության, առողջական վիճակի համաիր հետազոտման իրականացման հետ, **1-ի** խնդիրը վերաբերել է տարկետման ընթացքում արտերկրում կրթություն ստանալու համար անձնագրի տրամադրմանն ու վավերականության ժամկետի երկարաձգմանը, **1-ի** խնդիրը վերաբերել է սեփական միջոցներով առողջական վիճակի հետազոտություններ անցնելու արհեստական խոչընդոտների ստեղծմանը՝ բժշկական հաստատությունների կողմից՝ վերջինիս գորակոչիկ հանդիսանալու հանգամանքով պայմանավորված:

Գրավոր ընթացակարգով իրավական աջակցություն ստացած 10 պահեստագորայիններից 5-ի խնդիրը վերաբերվել է վարժական հավաքների մասնակցության ժամկահատվածի փոփոխությանը, **2-ինը**՝ առողջական վիճակով պայմանավորված վարժական հավաքներին ենթակա ճանաչվելուն, **2-ինը**՝ աշխատանքով պայմանավորված վարժական հավաքներին մասնակցությանը, **1-ինը**՝ վարժական հավաքների կանչման իրավաչափությանը:

Արցախից ՀՀ տեղափոխված զինվորական հաշվառման ենթակա **1** անձի գործով դիմում է ուղարկվել ՀՀ ՊՆ ԶԶԾՕ՝ վերջինիս զինվորական հաշվառման վերաբերյալ:

Պատասխան գրության ժամկետը	Ժամանակին		Ուշացումով		Չպատասխանված գրություններ	Ընդամենը
	Ըստ էության	Ոչ ըստ էության	Ըստ էության	Ոչ ըստ էության		

Ուղարկված գրությունների թիվը	32	0	5	0	4	41
------------------------------	----	---	---	---	---	----

Գրությունների միջոցով բարձրացված խնդիրների ուղղությամբ արձանագրված արդյունքները տե՛ս հաջորդ բաժնում՝ «2023 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում դիմած անձանց խնդիրներով տրամադրված իրավական աջակցության արդյունքները»:

Բացի վերոնշյալ գրություններից ուղարկվել է ևս 4 գրություն ուղղված համակարգային խնդիրների լուծմանը, որոնցից երեքը վերաբերում են ՀՀ կառավարության N 404-Ն որոշման մեջ որոշ հիվանդությունների և դրանց փորձաքննության մեթոդների հստակեցմանը (ախալազիա՝ 30, 34 հոդվածներ, անգիոտրոֆոններոզ 48 հոդված, սեռական օրգանների հիվանդություններ՝ հոդված 56 և 58 հոդվածներ), ևս մեկ գրությամբ նեկայացվել է զորակոչի շրջանակներում զորակոչիկների սեփական ֆինանսական միջոցներով բժշկական հետազոտություններ անցնելու խնդրի մասին:

Այսպես, գրություններից մեկը, որն ուղարկվել է 2023 թ ամառային զորակոչի ժամանակ, վերաբերել է «անգիոտրոֆոններոզ» հիվանդությանը («Աորտայի, մագիստրալ, պերիֆերիկ անոթների, ավշային անոթների հիվանդություններ, բնածին արատներ, վնասումների հետևանքներ և հետվիրահատական վիճակներ») և ՀՀ Կառավարության 404-Ն որոշմամբ կատարված փոփոխություններով պայմանավորված նախկինում նշված առողջական խնդրով տարկետում ստացած զորակոչիկների հետազոտմանը և որոշման մեջ այլևս փաստացի գոյություն չունեցող «անգիոտրոֆոններոզ» եզրույթի կիրառմանը բժշկական հանձնաժողովների եզրակացություններում: Ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշվել է, որ նշված փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո՝ նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների հիվանդանոցային հետազոտում և բուժում իրականացնող բժշկական կազմակերպությունների տնօրեններին, իրավասու բժշկական հանձնաժողովներին և ոլորտի բժիշկ-մասնագետներին ՀՀ առողջապահության նախարարության կողմից ուղարկվել է համապատասխան մեթոդական ուղեցույց:

Կազմակերպության կողմից ուղարկված մյուս գրություններն, ըստ էության, իրենցից ներկայացնում են օրենսդրական առաջարկություններ ՀՀ Կառավարության N 404-Ն որոշման Հավելված 1-ով սահմանված հիվանդությունների փորձաքննության իրականացման հստակեցմանը:

Մասնավորապես՝ ՀՀ Կառավարության N 404-Ն որոշման հավելված 1-ով կերակրափողի մասնահատման դեպքերը և սպիական նեղացումները սահմանող 30-րդ և 34-րդ հոդվածներով չի սահմանվում, թե կերակրափողի ախալազիան և մասնավորապես՝ հետվիրահատական դեպքերը որ հոդվածով պետք է փորձաքննվեն, եթե չի կատարվել կերակրափողի մասնահատում: Ելնելով այն հանգամանքից, որ նշված խնդրով փորձաքննության իրականացման վերաբերյալ համապատասխան կարգավորումը ներառված չէ ՀՀ կառավարության 404-Ն որոշման մեջ, Կազմակերպությունը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու՝ ախալազիայի առկայության և կերակրափողի մասնահատում չկատարելու դեպքում հետվիրահատական դեպքերի փորձաքննության իրականացման վերաբերյալ համապատասխան կարգավորումը 404-Ն որոշման մեջ ներառելու հարցով: Ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տեղեկացվել է, որ կերակրափողի ախալազիա ախտորոշում ունեցող քաղաքացիների փորձաքննությունն իրականացվում է 34-րդ հոդվածով, ուստի որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման Հավելված 1-ի ցանկի գործող կարգավորմամբ՝ միակ ամորձու առկայության դեպքում անձանց փորձաքննելու մասին նշվում է միայն 58-րդ հոդվածի «ա» կետում, մասնավորապես՝ «ա) երկու ամորձու տեղակայում որովայնի խոռոչում կամ բացակայությունը, միակ ամորձի» և նախատեսվում է, որ I, II, IV, V, VI սյունակներով փորձաքննվող անձինք ճանաչվում են ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

Մինչդեռ 58-րդ հոդվածով փորձաքննվողների վերաբերյալ նշվում է 56-րդ հոդվածի բացատրական մասում, որտեղ սահմանվում է, որ «*չորրորդ և հինգերորդ սյունակների համար կիրառվում է 58 հոդվածի «գ» կետը*», այսինքն՝ անձինք պիտանի են զինվորական ծառայության համար:

Հարկ է արձանագրել, որ անձինք, այդ թվում չորրորդ և հինգերորդ սյունակներով փորձաքննվողները (*պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական*

ծառայության գորակոչի ենթակա քաղաքացիներ, բոլոր կազմերի պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար դիմած քաղաքացիներ, բոլոր կազմերի պայմանագրային զինծառայողներ, պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներ, ՌՌԻՀ-երի կուրսանտները (սպայական կոչում չունեցող ունկնդիրներ, ուսանողներ), բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորողներ, վարժական հավաքների ներգրավվող քաղաքացիներ, զորահավաքային գորակոչի ենթակա քաղաքացիներ), ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման Հավելված 1-ի ցանկի 58-րդ հոդվածի «գ» կետով փորձաքննվում են երկու ամորձու առկայության պայմաններում, մասնավորապես՝ այն դեպքում, երբ մի ամորձին տեղակայված է աճուկային խողովակից ցած, մյուսը ունի նորմալ տեղակայում:

Այսպիսով, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման Հավելված 1-ով իմպերատիվ կերպով սահմանվում է, որ միակ ամորձու դեպքում անձինք, այդ թվում նաև չորրորդ և հինգերորդ սյունակներով փորձաքննվողները պետք է փորձաքննվեն միայն 58-րդ հոդվածի «ա» կետով և ոչ թե «գ» կետով:

Ելնելով վերոգրյալից, Կազմակերպությունն առաջարկել է կատարել փոփոխություն 56-րդ հոդվածի «ա» կետի բացատրական մասի 8-րդ կետում «8) միակ ամորձի՝ (կիրառվում է 58 հոդվածի «ա» կետը» բառերից հետո հանել «չորրորդ և հինգերորդ սյունակների համար կիրառվում է 58 հոդվածի «գ» կետը» բառերը և չորրորդ և հինգերորդ սյունակներով փորձաքննվողներին ազատել վարժական հավաքներին մասնակցելու պարտավորությունից:

Առաջարկությանն ի պատասխան, ՀՀ ՊՆ գորակոչային և զորահավաքային համալրման ծառայությունից վերստին վկայակոչելով այն, որ հոդվածի բացատրական մասում նշված կարգավորումը բավարար հիմք է դրանով առաջնորդվելու համար, տեղեկացվել է, որ օրենքում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Մյուս խնդիրը, որի վերաբերյալ Կազմակերպությունը 2023 թվականի ամառային գորակոչի ընթացքում դիմել է ՀՀ պաշտպանության և առողջապահության նախարարություններին, վերաբերում է գորակոչի ընթացքում ՀՀ ՊՆ գորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների

բժշկական հանձնաժողովների հորդորին՝ սեփական ֆինանսական միջոցներով բժշկական հետազոտություններ անցնելու մասին, որոնք հիմնականում ներառում են թանկարժեք հետազոտությունները: 2023 թ. ամառային գորակոչի ընթացքում նշված խնդրով Կազմակերպություն է դիմել 4 գորակոչիկ:

Զորակոչիկների սեփական ֆինանսական միջոցներով բժշկական հետազոտություններ անցնելու ՀՀ ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների հորդորը ՀՔԱ Վանաձորի գրասենյակը համարում է անընդունելի, քանի որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է, որ *քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության գորակոչի, ներառյալ՝ գորահավաքային գորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու դեպքերում քաղաքացիների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են առաջնահերթ ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:*

Կազմակերպությունը մշտապես բարձրաձայնել է Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից որոշում կայացնելիս գորակոչիկների սեփական միջոցներով անցած բժշկական հետազոտությունների արդյունքները հաշվի առնելու կարևորությունը, սակայն ՀՀ ՊՆ ԶԶՀԾ տարածքային ստորաբաժանումների կողմից գորակոչիկներին վճարովի հետազոտություններ անցնելու պարտադրանքը կամ ցուցումները ոչ միայն ակնհայտորեն հակասում են օրենսդրությամբ սահմանված կարգին, այլ նաև հանդիսանում են սոցիալական անարդարության վառ դրսևորում, քանի որ սոցիալապես անապահով գորակոչիկները չեն կարող անցնել հետազոտություններ սեփական ֆինանսական միջոցներով, ինչի արդյունքում զինծառայությանը նրանց պիտանիության վերաբերյալ որոշումը կկայացվի թերի, ոչ լիարժեք բուժօգնությունների հիման վրա:

Կազմակերպությունը դիմել է ՀՀ պաշտպանության և առողջապահության նախարարություններին՝ խնդրի լուծման ուղղությամբ անհապաղ քայլեր ձեռնարկելու հարցով: Ի պատասխան, ՀՀ ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության կողմից տեղեկացվել է, որ տարածքային ստորաբաժանումներին ևս մեկ

անգամ ցուցում է տրվել ՀՀ կառավարության 2018 թ N 404-Ն և 405-Ն որոշումներով
ղեկավարվելու վերաբերյալ:

**2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ և ՁՄԵՌԱՅԻՆ ՁՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԻՄԱԾ
ԱՆՁԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԿԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Կազմակերպությանը դիմած **97** գորակոչիկներից.

- 4 հոգի ճանաչվել է **ոչ պիտանի** զինվորական ծառայության համար,
- 4 հոգի ճանաչվել է **ժամանակավորապես ոչ պիտանի** զինվորական ծառայության համար,
- 7 հոգու տրամադրվել է **տարկետում զինվորական ծառայությունից մինչև 1 տարի** ժամկետով (5 ամիս, 6 ամիս կամ 10 ամիս),
- 5 հոգու վերաբերյալ կենտրոնական բժշկական հանջնաժողովի (ԿԲՀ) եզրակացության բողոքարկման արդյունքում որոշում է կայացվել վերջիններիս **ներկայացնել հաջորդ գորակոչին,**
- 1 հոգու **անձնագրում երկարաձգվել է արտերկրում գտնվելու թույլտվության ժամկետը`** ոչ ֆորմալ կրթական ծրագրին մասնակցելու նպատակով,
- 13 հոգի` չհամաձայնելով առողջական վիճակի հետազոտությունների արդյունքների հետ, **բողոքարկել է զինվորական ծառայությանը պիտանիության մասին ԿԲՀ եզրակացությունը:** Կազմակերպությունը շարունակում է իրավական աջակցություն է ցուցաբերել նշված գորակոչիկների` քրեական վարույթի շրջանակներում:

Կազմակերպությանը դիմած **պահեստագործում հաշվառված 64 անձանցից**

- **3-ը,** ովքեր պահեստագործայիններին վարժական հավաքների ներգրավելու շրջանակներում չեն ենթարկվել բժշկական համալիր հետազոտությունների, Կազմակերպության դիմումների հիման վրա համապատասխան գանգատներով **ուղեգրվել** են բժշկական հետազոտությունների, որոնց արդյունքում կայացվել է որոշում վերջիններիս` վարժական հավաքների ենթակա լինելու մասին,
- 1-ը ով ԲՈՒՀ-ի ուսասանող է Կազմակերպության դիմումի հիման վրա ներգրավվել է վարժական հավաքների **համալսարանի ավարտական քննություններից հետո,**
- 1-ը ճանաչվել է վարժական **հավաքներին ոչ ենթակա`** առողջական խնդիրներով պայմանավորված:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով այն հանգամանքը, գորակոչի կազմակերպման և անցկացման ընթացքում առկա են խնդիրներ, որոնք կրում են պարբերական բնույթ, շարունակաբար արձանագրվում են յուրաքանչյուր գորակոչի ժամանակ և մինչ օրս լուծված չեն՝ ներկայացնում ենք համապատասխան առաջարկությունները.

1. Պետության կողմից տրամադիր անվճար բուժօգնության շրջանակներում իրականացնել արդյունավետ և որակյալ բժշկական միջոցառումներ՝ ներառյալ մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա և այլ լաբորատոր կամ գործիքային հետազոտություններ, որոնք կապահովեն գորակոչիկների առողջական խնդիրների բացահայտման արդյունավետությունը:

2. Բժշկական փորձաքննություն իրականացնելիս ապահովել անձի առողջական վիճակի գաղտնիության իրավունքը:

3. Բացառել գորակոչիկների կողմից ներկայացված գանգատները չարձանագրելու պրակտիկան: Անկախ այդ գանգատների հետագա հետազոտման արդյունքներից՝ դրանք պատշաճ արձանագրել անձի առողջական վիճակի հետազոտման ակտերում:

4. Հաշվի առնել սեզոնային հիվանդությունների բնույթը և առանձնահատկությունները, և միայն դրա հիման վրա կայացնել համապատասխան որոշում:

5. Ապահովել բոլոր անհրաժեշտ հետազոտությունների համար նախատեսված ուղեգիր՝ գորակոչիկի պիտանիության վերաբերյալ ճիշտ և իրական որոշում կայացնելու համար:

6. Բացառել որոշ բժշկական հաստատությունների՝ առանց ուղեգրի ներկայացած 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին՝ չհետազոտելու պրակտիկան՝ վերջիններիս տարիքի և գորակոչիկ հանդիսանալու հանգամանքով պայմանավորված:

7. Մի քանի առողջական խնդիրներ ունեցող գորակոչիկի բժշկական զննությունն իրականացնել բոլոր խնդիրներով և առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունը ներկայացնել առողջական բոլոր խնդիրների վերաբերյալ՝ անկախ մեկ խնդրով պիտանիության վերաբերյալ որոշումից:

8. Անձի մոտ 5 և ավելի հիվանդության առկայության դեպքում դիտարկել ոչ թե միայն հիվանդությունների քանակը, այլ նույն անձի մոտ գուրգահեռաբար մի քանի

հիվանդության պարագայում հնարավոր ծանրաբեռնվածության և ընդհանուր առողջական վիճակի և հնարավոր վատթարացման հանգամանքը:

9. Պիտանիության աստիճանը որոշող դրույթները սահմանելիս հաշվի առնել անձի առողջական խնդիրների ծանրության աստիճանը:

10. Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկում հստակեցնել «ձգձգվող» կամ «բուժմանը դժվար ենթարկվող» հասկացությունները և սահմանել կոնկրետ ժամկետներ կամ ժամանակահատվածներ ըստ յուրաքանչյուր հիվանդության:

11. ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման բացատրական մասում հողվածների փորձաքննության կարգը համապատասխանեցնել է նույն որոշման հավելված 1-ում իմպերատիվ կերպով գործող դրույթին: (Օրինակ՝ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման Հավելված 1-ով իմպերատիվ կերպով սահմանվում է, որ միակ ամորձու դեպքում անձինք, այդ թվում նաև չորրորդ և հինգերորդ սյունակներով փորձաքննվողները պետք է փորձաքննվեն միայն 58-րդ հողվածի «ա» կետով և ոչ թե «գ» կետով, ինչպես սահմանվում է 56-րդ հողվածի բացատրական մասում՝ «չորրորդ և հինգերորդ սյունակների համար կիրառվում է 58 հողվածի «գ» կետը», այսինքն՝ անձինք պիտանի են զինվորական ծառայության համար):

12. Հաշվի առնելով մտավոր խնդիրներ ունեցող զինծառայողների՝ զինվորական պարտականությունների արդյունավետ իրականացման խոչընդոտները և կարևորելով զինծառայողների առողջության վատթարացման կանխարգելումը՝ ընդունել զորակոչիկների և զինծառայողների համար բարենպաստ իրավական ակտ՝ զինվորական ծառայությունից ազատելով «Մտավոր հետամնացություն, ուսման հետ կապված խնդիրներ» ունեցող զորակոչիկներին:

13. Օրենքով նախատեսված եղբայրների նույն զորամասում ծառայության անցնելու մասին դրույթի կիրառման հիմքում չդնել ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության վայրի զորամասի համայրում նախատեսված չլինելու հանգամանքը և զորակոչվող եղբոր մասնագիտացումը, հնարավորություն ընձեռելով եղբայրներին ծառայելու նույն զորամասում:

14. Բոլոր իրավական ակտերում «Զինվորական կոմիսարիատ» եզրույթը փոխարինել «Զորակոչային և զորահավաքային համայրման ծառայության տարածքային ստորաբաժանում» երզույթով:

15. Պահեստագործում հաշվառված անձանց՝ հայտարարված վարժական հավաքների կամ գորահավաքային գորակոչի շրջանակներում ներգրավելիս իրականացնել վերջիններիս պատշաճ, օբյեկտիվ բժշկական գննությունն ու փորձաքննությունը:

16. Հայտարարված վարժական հավաքների կամ գորահավաքային գորակոչի շրջանակներում պահեստագործում հաշվառված անձանց գորակոչելիս հաշվի առնել նրանց զինվորական մասնագիտությունը:

17. Զորակոչիկներին և պահեստագործում հաճվառված անձանց ենթարկել համալիր հետազոտությունների՝ նրանց իրական առողջական վիճակը բացահայտելու համար:

**1998 թ-ից ՄԻՆՉԵՎ 2024 թ-ՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ը ՀՀ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՍԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՄՏԱՑԱԾ ԵՎ ԱԶԱՏՎԱԾ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ուսումնասիրել է 1998 թ-ից ի վեր մինչև 2024 թ. հունվարի 31-ը ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումները, որոնց հիման վրա առանձին քաղաքացիների տրամադրվում է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում կամ ազատում տարբեր հիմքերով:

Քաղաքացիներին Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ տարկետման տրամադրման մասին որոշում է կայացվում համաձայն 2017 թ. նոյեմբերի 17-ի «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածների 5-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 450-Ն, N 451-Ն, N 457-Ն որոշումների:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվում է՝ «...քաղաքացին կարող է բացառիկ դեպքերում ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից՝ ՀՀ կառավարության որոշմամբ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով»: Նշված օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվում է, որ «...Գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում կարող է տրվել նաև ՀՀ կառավարության որոշմամբ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և պայմաններով»:

Ի դեպ, 2023 թ. ապրիլի 13-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-126-Ն²⁶) օրենքը: Մասնավորապես, սահմանվեց, որ զիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի

²⁶ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=176876>

նվաճումների համար, ինչպես նաև բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (FS&U) ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորողին նախատեսված տարկետումները չեն կարող տրվել ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ պաշտպանության նախարարության նշանակված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին ՀՀ ՊՆ հետ քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած քաղաքացիներին:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 450-Ն որոշման համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում է տրամադրվում սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին²⁷:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-ն որոշման՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում է տրամադրվում գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին²⁸:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 457-ն որոշման՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում է տրամադրվում մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին²⁹:

Քաղաքացիները Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում են ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89-Ն՝ «Քաղաքացուն բացառիկ դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կարգը սահմանելու մասին» որոշման համաձայն¹⁸՝ մշակույթի և արվեստի, սպորտի, ինչպես նաև գիտական աստիճան ունեցող քաղաքացուն կրթության և գիտության բնագավառներում գործունեության հիմքով:

2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունվեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-363-Ն որոշումը³⁰: Օրենքի 21-րդ հոդվածը լրացվեց 5.1-ին մասով: Մասնավորապես՝ «Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն

²⁷ [arlis.am/DocumentView.aspx?docid=167838](https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=167838)

²⁸ [arlis.am/DocumentView.aspx?docid=189049](https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=189049)

²⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135030>

³⁰ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=169377>

քաղաքացին, որը, որպես օտարերկրյա քաղաքացի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերել որևէ մարզաձևի՝ Հայաստանի Հանրապետության հավաքական թիմում (որևէ տարիքային խմբում) հանդես գալու համար և մինչև 2021 թվականի մայիսի 1-ը պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքը կորցրել է: Սույն օրենքը գործել է մինչև 2023 թվականի հունվարի 31-ը:

Համաձայն մեր ուսումնասիրության՝ 1998-ից մինչև 2024 թ. հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում զինվորական ծառայությունից տարկետում ստացել է 3039 քաղաքացի, որոնցից 41-ի տարկետումը հետագայում դադարեցվել է (33-ի տարկետումը դադարեցվել է առաջին անգամ տարկետում ստանալուց հետո, 8-ինը՝ 2-րդ տարկետումից հետո):

Ուսումնասիրության համաձայն զինվորական ծառայությունից ազատվել է 388 քաղաքացի: Ընդ որում, ազատված անձանցից 70-ը պարտադիր զինվորական ծառայությունից ազատվել են միանգամից՝ առանց մինչ այդ տարկետում ստանալու: Իսկ 318 անձ զինվորական ծառայությունից ազատվել է նախկինում մեկ կամ ավելի անգամ տարկետում ստանալուց հետո: 1 քաղաքացու զինվորական ծառայությունից տրված ազտման որոշումը դադարեցվել է 2023 թվականին:

2280 քաղաքացի զինվորական ծառայությունից տարկետում է ստացել 1 անգամ, **759** քաղաքացի տարկետում է ստացել ավելի քան մեկ անգամ, մասնավորապես՝

- 491 քաղաքացի՝ 2 անգամ**
- 191 քաղաքացի՝ 3 անգամ**
- 33 քաղաքացի՝ 4 անգամ**
- 16 քաղաքացի՝ 5 անգամ**
- 9 քաղաքացի՝ 6 անգամ**
- 10 քաղաքացի՝ 7 անգամ**
- 6 քաղաքացի՝ 8 անգամ**
- 3 քաղաքացի՝ 9 անգամ (տե՛ս Աղյուսակ 1-ը)**

Աղյուսակ 1. 1998-ից մինչ 2024 թ. հունվարի 31-ը ՀՀ Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացած կամ ազատված անձանց թիվն ըստ հիմքերի եւ տարկետումների հաճախականության

Տարկետման և ազատման հիմքերը	Տարկետումների թիվն ըստ անձանց	Ազատումների թիվն ըստ անձանց	Պարտադիր զինվորական ծառայությունից տարկետումների հաճախականությունը և դրանց արդյունքում ազատումների թիվը
-----------------------------	-------------------------------	-----------------------------	---

			Տրամադրված տարկետումների հաճախականությունը՝ ներառյալ նույն անձին 1 և/կամ մի քանի անգամ տրամադրված տարկետումների թիվը		Տարկետումից հետո ազատում	Միանգամից ազատում
					Անձ	
Կրթական	1237	0	1364			
			1 անգամ	1147		
			2 անգամ	61		
			3 անգամ	23		
			4 անգամ	4		
			5 անգամ	2		
Հոգևորական	404	190	1008		172	18
			1 անգամ	133	26	18
			2 անգամ	99	55	
			3 անգամ	110	70	
			4 անգամ	22	9	
			5 անգամ	12	1	
			6 անգամ	9	6	
			7 անգամ	10	2	
			8 անգամ	6	0	
		9 անգամ	3	3		
Սպորտ	424	90	620		64	26
			1 անգամ ³¹	286	16	26
			2 անգամ	84	21	
			3 անգամ	50	26	
			4 անգամ	4	1	
Հիմքը նշված չէ	59	6	63		3	3
			1 անգամ	55	2	3
			2 անգամ	4	1	
Մշակութային	65	10	103		6	4
			1 անգամ	40	3	4
			2 անգամ	18	1	
			3 անգամ	3	1	
			4 անգամ	2	1	
			5 անգամ	2		
Գիտական-կրթական	843	56	1078		48	8
			1 անգամ	615	44	8
			2 անգամ	222	4	
			3 անգամ	5		
			4 անգամ	1		
Գիտական և գիտատեխնիկական գործունեություն	1	36	1		25	11
			1 անգամ	1	5	11
			2 անգամ		20	
Աշխատանքային	6	0	9			
			1 անգամ	3		
			2 անգամ	3		
Ընդամենը	3039	388	4246		318	70

³¹3 դեպքում տարկետումը դադարեցվել է որոշակի սպորտաձևի հավաքական թիմի կազմում 3 քաղաքացիների ընդգրկված չլինելու հիմքով

Չինվորական ծառայությունից 3039 տարկետում ստացած և 388 ազատված քաղաքացիների վերաբերյալ 1998 թվականից մինչև 2024 թվականի հունվարի 31-ը Կառավարության կողմից ընդունվել է 819 որոշում, որից 713-ը՝ տարկետման, 106-ը՝ ազատման վերաբերյալ:

Աղյուսակ 2. 1998-ից մինչ 2024 թ. հունվարի 31-ը ՀՀ կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացած կամ ազատված անձանց վերաբերյալ ընդունված որոշումների թիվն ըստ տարկետման և ազատման հիմքերի

Տարկետման և ազատման հիմքերը	Տարկետման մասին որոշում	Ազատման մասին որոշում	Ընդամենը
Կրթական	456	0	456
Հոգևորական	37	20	57
Մշակութային	51	10	61
Սպորտ	83	29	112
Հիմքը նշված չէ	37	3	40
Գիտական-կրթական	45	33	78
Աշխատանքային	3	0	3
Գիտական-գիտատեխնիկական	1	11	12
Ընդամենը	713	106	819

ՀՀ կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տրամադրված տարկետումների վերաբերյալ տվյալներ

1998-ից մինչև 2024 թ. հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում կրթությունը շարունակելու նպատակով ընդունվել է 456 տարկետում տրամադրելու որոշում 1237³² քաղաքացիների վերաբերյալ, որոնք սովորում են հանրակրթական, հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով, ինչպես նաև

³²Այն անձինք, ովքեր նախկինում կրթական հիմքով տարկետում ստանալուց հետո նաև տարկետում են ստացել կամ ազատվել են գիտական-կրթական հիմքով, Կազմակերպության կողմից ներառվել են գիտական-կրթական հիմքով տարկետում ստացածների թվում:

բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ:

Հայ Առաքելական եկեղեցու **404** հոգևոր սպասավորների և/կամ հոգևոր ճեմարաններում ուսուցանող սաների վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման վերաբերյալ **37** որոշում:

Մշակութային (մշակույթի և արվեստի բնագավառում ունեցած բացառիկ ընդունակությունների) հիմքով **65** անձի վերաբերյալ կայացվել է տարկետման մասին **51** որոշում:

Սպորտի բնագավառում բացառիկ ունակություններ ցուցաբերած **424** անձանց վերաբերյալ ընդունվել է տարկետման մասին **83** որոշում:

Գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող **843** անձի վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման մասին **45** որոշում: *Ի դեպ, 25 հունվարի 2024 թվականի N 103-Ն որոշմամբ³³ փոփոխություն կատարվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման» մեջ: Սահմանվեց, որ ստացած տարկետման ժամկետի ընթացքում յուրաքանչյուր տարվա մինչև **հոկտեմբերի 30-ը** քաղաքացին կամ նրա օրինական ներկայացուցիչը կամ նրա կողմից լիազորված անձը քաղաքացու զինվորական հաշվառումն իրականացրած ստորաբաժանում են ներկայացնում համապատասխան ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքը՝ հաջորդ կուրս փոխադրվելու վերաբերյալ: Նախկինում ժամկետը սահմանված որ մինչև սեպտեմբերի 30-ը:*

Աշխատանքային հիմքով տարկետում տրամադրելու վերաբերյալ ընդունվել է **3** որոշում **6** անձի վերաբերյալ:

59 անձի վերաբերյալ տարկետման մասին **37** որոշումներում **չի նշվում տարկետման պատճառը:**

³³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=189042>

***Կառավարության որոշմամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից
ազատման վերաբերյալ որոշումներ***

Հայ Առաքելական եկեղեցու 190 հոգևոր սպասավորների եւ/կամ հոգևոր ճեմարաններում ուսուցանող սաների վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից ազատման **վերաբերյալ 20 որոշում**: Նշված անձանցից 168-ը նախկինում ստացել է տարկետում մեկ կամ մի քանի անգամ, իսկ 18-ը միանգամից ազատվել են զինվորական ծառայությունից՝ առանց նախկինում տարկետում ստանալու:

Մշակույթի բնագավառում ցուցաբերած բացառիկ ընդունակությունների համար **10** անձի վերաբերյալ կայացվել է զինծառայությունից ազատման մասին **10** որոշում: Ընդ որում նրանցից 5-ը ազատվել են զինծառայությունից մեկ կամ ավելի անգամ տարկետում ստանալուց հետո, իսկ 3 հոգին՝ միանգամից:

Սպորտի բնագավառում բացառիկ ունակություններ ցուցաբերած **90** անձանց վերաբերյալ ընդունվել է զինծառայությունից ազատման մասին **29** որոշում: Նրանք բոլորը նախկինում մեկ կամ մի քանի անգամ ստացել են տարկետում:

Գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող **56** անձի վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից ազատման մասին **33** որոշում:

6 անձի դեպքում զինծառայությունից ազատման վերաբերյալ ընդունված **3** որոշումներում չի նշվում ազատման հիմքը: Ընդ որում նրանցից 3-ը նախկինում ստացել է տարկետում, իսկ 3-ը միանգամից ազատվել են զինծառայությունից՝ առանց նախկինում տարկետում ստանալու:

Այսպիսով, մինչ օրս ամենաշատ տարկետումները տրամադրվել են կրթական հիմքով, ընդ որում կրթական հիմքով զինվորական ծառայությունից ազատման որևէ որոշում չի կայացվել: 424 քաղաքացի սպորտի բնագավառում գրանցած նշանակալի ձեռքբերումների հիմքով ստացել է տարկետում, ընդ որում՝ 84 քաղաքացի 2 անգամ է տարկետում ստացել, 50 հոգի՝ 3 անգամ և 4 քաղաքացի ստացել է 4 անգամ: